ՀԵՂԱԿ

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ.

Նամակ առաջին.

—

Ձեր Նամակի ընթերցումն, ազնիւ բարեկամներ, շատ մտածումների առիթ տվեց մեզ։ Պէտք է խոստովանենք, որ այդ մտածումները տխուր էին։ Դուք գանգատվում էք, որ խիստ հալածումների ենթակայ է հայ ժողովուրդը, գանգատվում էք յեղափոխական կուսակցական բաժանումներից, գանգատվում էք, որ այդ կուսակցութիւնների մէջ մինչև այժմ չառաջացաւ միութիւն։ Եւ այդ բոլոր հանգամանքները ձեզ թվում են վհատական։ Չը գիտէք դէպի ուր շրջվել ուր հանգիստ տալ ձեր նայեացքին, ինչ անել, ինչպէս անել... և վհատվում էք։

Յիրաւի, ծանր, վճռական րոպէ է անցնում հայութիւնը ներկայումս. յիրաւի, մխիթարական առհասարակ քիչ լան կայ նրա կեանքում, բայց և այնպէս այդ վիճակն այնքան վհատական չէ, որքան ձեզ է թվում։ Մենք լաւատես չենք, բայց և յոռետես չենք, սակայն գիտենք, որ եթէ մէկ ազգի կեանքում առաջանում է յեղափոխական շրջան, էպօխա, այդ ազգն այն ժամանակ ենթարկված է խիստ հալածումների, մեծամեծ կորուստների, սոսկալի ցնցումների։ Բայց հալածվելով, կորուստներ, ցնցումներ կրելով մի կողմից, միւս կողմից նոյն իսկ այդ հալածումների, կորուստների, ցնցումների զնով է, որ նա կարող է վաստակել իր դատը։ Մէկը միւսով պայմանաւորվում է։ Աղստամբական, յեղափոխական շարժումները պատերազմ է. պատերազմում հալածվում են, կոտորվում են, բայց և այդ հալածվելով ու կոտորվելովն է, որ տանում են յաղթանակը։

Իսկապէս ի՞նչ է եղել հայերիս մէջ։ Անցեալ տարվայ վերջերը տեղի ունեցան մի քանի յեղափոխական շարժումներ, որոնք գրգռելով ամբողջ հայութեանը, յեղափոխական դրութիւն ստեղծեցին նրա կեանքում։ Այդ շարժումներն, ինչպէս էլ սպասելի էր, տեղի տվին կառավարութեան հալածումներին, որ ինքնապաշտպանութեան ոգով մղված, յուսահատաբար մղում էր իր այժով հայ յեղափոխականների գաղտնի այժի դէմ։ Կառավարութիւնը բազմաթիւ ձերբակալութիւններ արեց և իվերջոյ տասնեակներ աքսորեց ամենասոսկալի վայրեր, բայց դրանով յեղափոխականների այժը նա չը կասեցրեց. նախ որ անկածների փոխարէն առաջ եկան նորերը և երկրորդ — որ գլխաւորն է — յեղափոխական այժի գաղտնիքը իրերի դրութեան տրամաբանութիւնն է և յեղափոխականների բարոյական այժը, որ կառավարութիւնը չէ կարող ոչնչացնել։

Եւ այդ բոլոր երևոյթներն էապէս ի՞նչ են։ Նրանք նախագուշակութիւններ են մօտիկ փոթորկի, հասարակական փոթորկի, որ այս րոպէիս խուլ կերպով պատրաստվում է հայոց մէջ։ Այն մարդիկը, որ այդ երևոյթներից միայն վհատվել գիտեն, արդեօք չի՞ն ապացուցանում, որ յեղափոխական նախնական, պատրաստական շարժումների խմաստն ու նշանակութիւնը չեն հասկանում։ Եւ չը հասկանալով, նրանք պնդում են թէ՝ „ի՞նչ հետևանք ունեցան այդ շարժումները. մեր դատը վաստակելու փոխարէն, աւելի վատթարացաւ մեր դրութիւնը"։ Խօսք չը կայ, որ դա միամիտ և կամ թշնամական առարկութիւն է։ Ինչպէ՞ս կարելի է այնպիսի ցնորական երազներ ունենալ, թէ մի քանի շարժումով հայն իր ազատութիւնը պէտք է ձեռք բերած լինէր և կամ զզալի կերպով թեթևացրած իր վիճակը....

Դուք ասում էք, թէ „հայ ընդհանրութիւնը և նրա հետ միասին նրանից աւելի բարձր շրջանները, կորցնելով իրենց սկզբնական զրգռումը, զզալի կերպով վհատվեցան կառավարական հալածումների ընդհանրով"։ Անվարժ յեղափոխական դրութեան տագնապներին, որ տեղի ունեն այժմ հայոց կեանքում, հայութիւնը կարող է հեշտութեամբ ընկճվել թէ՛ ծանր և թէ՛ չնչին ձախորդութիւններից, որպէս և հեշտութեամբ յափշտակվել աջողութիւններից։ Ախր դեռ երէկ, դեռ մի տարի առաջ հայութիւնը քնած էր. նա քնած էր սարկի յոգնած ու ծանր քնով։ Յանկարծ նրա ականջին ահագին աղմկով զարկեցին յեղափոխութեան կոչնակը։ Նա վեր թռաւ չչմված և տեսաւ որ կան հայեր, որոնք քնած չեն և սուրբ պատերազմի փողն են փչում։ Եւ նա գնաց փոդ փչողների, յեղափոխու

թեան դրօշակը պարզողների ետեւից։ Նա գնաց այնպէսի յափշտակութեամբ, այնպիսի զուարթ ու եռանդուն հոգով, որ առաջին անգամ գիտակցաբար իր արիւնը թափելով, նա ո՛չ թէ կարծում էր, որ սկսում է միայն մեծ պատերազմը, այլ թէ նա՛ տօնում է իր վերջին յաղթանակը, ողջակիզելով իր արիւնը ազատութեան աստուածին։ Բայց հետեւանքները նրան հասկացրին, որ այդ առաջին ողջակիզութիւնն ուրիշ ոչ ինչ չէր, եթէ ո՛չ սկիզբը միայն սուրբ պատերազմի, մի տանջալի ու երկարատեւ պատերազմի, որի վախճանը ծածկված է ապագայի մթութեան մէջ։ Հայութիւնը սթափեց դրանից։ Ճանապարհը նրան թուաց շատ երկար, տանջանքները շատ խիստ և թշնամին սաստիկ կատաղի։ Նա կարծում էր, թէ զարթել է կիրակի օրը տօնելու համար, բայց բանից դուրս եկաւ, որ նա զարթել է մի մեծ ու երկար օրվայ ծանր աշխատանքի համար։ Նա չը կարողացաւ վստահ լինել իր ոյժի վրայ և ցոյց տւեց վհատութեան նշաններ... Բայց նրա այդ զարթելն անհրաժեշտ էր և դրա մէջն է հայկական յեղափոխութեան նախնական, պատրաստական շարժումների գլխաւոր խնդիրն ու նշանակութիւնը։

Բացի այդ, որ բնական երեւոյթ է, ժողովրդի վհատութեան մեծ — և շատ մեծ — պատճառ եղաւ մէկ ուրիշ հանգամանք։ Յայտնուեցան այնպիսի անձեր, որ իրենց համար բան ու գործ չինեցին անձնական շահագիտական տեսակէտից խաբուսիկ յոյսեր տալ, ասելի ճիշտ՝ լրբաբար խաբել ժողովրդին, թէ այսինչ օրը (օր. 1890 թ. մայիս 24, օգոստոսին վարդավառի օրը և այլն), այս-ինչ ժամին պէտք է ազատութիւն լինի, թէ սահմանագլխին 50-60 հազար հոգի զինուորված պատրաստ են ապստամբութեան համար, միայն դրամ է հարկաւոր և քիչ էլ մարդ, թէ բաւական է մէկ երկու շարժում, որ մեր դատը վաստակենք և այլն.... Այդ շարլատան անձերը, որ ամօթ չեն զգում իրենց գիտումների համար օգուտ քաղել ժողովրդի յեղափոխական տրամադրութիւնից, որ ամօթ չեն զգում շատ առաջ կանխապէս ապստամբութեան օրն ու ժամը նշանակել անգամ իբր ամեն բան իրենց կախարդական գաւազանի մի նշանով պէտք է կատարվէ, որ սենեակի անկիւնից պատգամներ են արձակում և իրենց ներկայանում իբր պետ մէկ ահագին զօրութեան, որը հնարված լինելով՝ տգեղ առասպելներից ամենատգեղն է — դրա՛նք, ասում ենք, դրանք մեծ ու ամենագլխաւոր պատճառը եղան ժողովրդի վհատութեան։ Ապըստամբելու համար նրանց նշանակած օրերը, ժամերն եկան ու անցան և բնականաբար, ոչինչ տեղի չունեցաւ և կոյրերին իսկ յայտնի եղաւ նրանց անամօթը խաբեբայութիւնը։ Այդ տեսնելով, ժողովուրդը սկսաւ իր յոյսը կորցնել, նրա հաւատը խախտուեցաւ և տեղի տուեց թերահաւատութեան ու վհատութեան։ Շարլատանների այդ գործունէութիւնը վարագոյրի ետեւ կատարվելով, նրանք պատրաստված էին ամեն բան պարզ ցոյց տալու յոյսից։ Բայց հանգամանքներն այնպէս բերին, որ հէնց այդ ժամանակները տեղի ունեցան հնչակեան յեղափոխական շարժումները, որով յայտնի եղաւ, թէ ճշմարիտ գործողները ովքեր են։ Եւ ահա տեսնելով, որ չէ կարող իրեն վերագրել այդ շարժումների նախաձեռնութիւնը, թշնամի լեզուն, ճգնելով ծածկել իր յանցանքները, օգտուեցաւ և միամիտ խելքը կրկնեց նրա ետեւից, թէ իբր այդ շարժումները մեծ նախագծեր խանգարեցին և թէ ժողովրդի վհատութեան պատճառն այդ շարժումներից յետոյ տեղի ունեցած հալածումներն են։ Ո՛չ, հայ ժողովուրդը գիտէ համբերել և յուսալ, գիտէ տանել հալածումները, որ նրա կեանքի մասն ու բաժինն են եղել ամբողջ դարերի ընթացքում և հալածումների առաւել խստութիւնից նա չէր կարող հասնել երբէք այդ աստիճան վհատութեան, եթէ հայոց կեանքում նրա սպըրգած դիմակաւոր ու անդիմակ ցեցերը, հայութեան անհարազատ զաւակները շարունակ չը խաբէին նրան, չը չեղէին նրա ճշմարիտ յոյսերը, ի չարը գործ չը դնէին նրա հաւատը դէպի գործն ու նրա ազատական զգացումները, չը պղտորէին նրա միտքը, չարաչար չը կեղեքէին նրան տգեղ պատասխանատուութեամբ ու անամօթ խաբեբայութեամբ ... և այդ ամենն՝ անձնական գիտումների տեսակէտից։

Բայց այդտեղ էլ վհատական ոչինչ չկայ։ Այդպէս միշտ եղել է և կը լինի այնքան ժամանակ, մինչև որ մեր կեանքի խաւարը ծածուկ կը պահէ ցեցերի դէմքը, մինչև որ մեր կեանքի պղտոր ջուրը միջից կը տայ նրանց ձուկ որսալ....

Հայ ներկայ սերնդին պատմական բաժին է ընկել գոյութիւն ունենալ հայոց կեանքի մի մեծ ճգնաժամին, որի միջոցին նա սաիթ ու անհրաժեշտ պէտք ունի ցոյց տալու թէ՛ քաղաքական արիութիւն, թէ՛ ընդունակ կենդանութիւն ունենալու և թէ՛ բարոյական մեծ ոյժի տէր հանդիսանալու։ Եթէ այդ յատկութիւնները հայ ներկայ սերունդն ունի և ցոյց է տալիս դրա ապացոյցները, վհատելու ոչինչ չըկայ։ Նա ունի պատմական մեծ դեր և նա պէտք է կատարէ այդ դերը, թէկուզ իր սեփական կորստի գնով։ Բայց դուք գրում էք. — „Դժբաղդ է մեր սերունդը, որի վրայ ընկել են պատմական մեծ պարտականութիւններ և կեանքի ամենածանր հանգամանքներ" Դժբա՞ղդ... ինչո՞ւ... Խուսափել այն պարտականութիւններից, ինչքան էլ այդ պարտականութիւնները ծանր լինեն, որ

ամեն ճառ կամ ատենախօսութիւն կանխաւ ներկայացուին կրթական նախարարութեան ի քննութիւն։ Այն շրջաբերականը, որուն նպատակն էր արգիլել գրգռիչ երգեր և ճառեր, ինքն ըստ ինքեան գրգռիչ դեր կատարեց հայ ժողովրդեան մէջ և պատճառ տուաւ մի քանի տեսչութեանց ամենեւին չը կատարել դպրոցական հանդէս։ Թուրք թերթերը զգալով հակառակ ազդեցութիւնը՝ յայտարարեցին թէ հանդէսներ չը կատարելուն և պարգևներ չը բաշխելուն բուն պատճառը — նոյն դպրոցներուն փող չ'ունենալն էր։

Գիտակ

— . —

ՆԱՄԱԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻՑ

1890 ՅՈՒԼԻՍ 15 ի ԱՐԻՒՆԱՀԵՂ ՅՈՅՑԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍԸ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ։

Աթէնքի Հնչակեան Մասնախումբը 1891 յուլիս 15 ին մեծահանդէս շքով տօնեց անցեալ տարւոյ Գում. Գափուի պատմական Ցոյցին տարեդարձը։ Այս հանդէսն քաղաքական մեծ նշանակութիւն առած լինելով կարժէ ըստ բաւականին մանրամասն կերպով նկարագրել և ցոյց տալ անոր այլ և այլ շրջանակաց վրայ գործած տպաւորութիւնը։

ՀԱՆԴԻՍԷՆ ՅԱՌԱՋ։

Իրարանցում դեսպանատանց մէջ։ Յոյն կառավարութեան շփոթութիւնը։ „Արևելեան Դաշնակցութեան" համակրութիւնը հայոց հանդէսին։

Գում. Գափուի Ցոյցի տարեդարձը և անոր մէջ ինկած հերոսներու յիշատակը հանդիսաւորապէս տօնելու համար տեղւոյս Հնչակեան Մասնախումբն ջանք չի խնայեց։ Համաձայն հնչակեան սկզբանց, թէ բոլոր թրքահպատակ ճնշված ազգեր համերաշխ պէտք է գործեն, Մասնախումբը որոշեց տօնախմբութեան հրաւիրել տաճիկ կառավարութեան լուծին տակ ճնշեալ ուրիշ այլ և այլ վայրերու ներկայացուցիչներն ևս՝ հանդէսին Թուրք կառավարութեան դէմ միջազգային ցոյցի կերպարանք մը տալու նպատակաւ։ Յոյն թերթերը օր առաջ սկսան հրատարակել հայոց հանդէսին և ծրագրին մասին տեղեկութիւններ։ Այս իմացուելով Թրքական դեսպանատան մէջ մեծ իրարանցում կը տիրէ. դեսպանն կը կանչէ մի քանի տեղացի վաճառական հայեր անոնցմէ բացատրութիւն պահանջելու և հանդէսն արգիլելու համար. բայց նոքա կը յայտարարեն թէ հայ յեղափոխականք իրենց (և Թրքական դեսպանատան) հրամանաց տակ չեն։ Թուրք դեսպանն ասոր վրայ անմիջապէս կը դիմէ Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան, պահանջելով արգիլել հայոց հրապարակային տօնախմբութիւնը. բայց ո՛նկէ ալ առած պատասխանը բաւական ապահովիչ չը գտնելով՝ սուլթանին հեռագրաւ կիմացունէ Աթէնքի հայոց դիտաւորութիւնը։ Սուլթանէն երկրս հեռագիր կուգայ ազդու դիմումներ ընելու և միևնոյն ժամանակ Բ. Դուռը կը դիմէ յոյն դեսպանին՝ որը իր կողմէ կը հեռագրէ հելլէն կառավարութեան սուլթանին կամքը....։ Յոյն կառավարութիւնը Թուրքաց սպառնալի սարսափէն և իրարանցումէն ինքն ալ ազդուելով և միւս կողմէ վախնալով որ հայոց կազմակերպած ցոյցը կրետացիները գրգռելով նոր քաղաքական կնճիռներ կրնան երևան գալ, մոռնալով իր երկրի սահմանադրական օրէնքները՝ տրամադիր կերևի սուլթանին կամքը յարգելու։ Բայց մի կէտ կը շուարեցնէ զինք և ի՛նչ ընելիքը չգիտեր։ Հայերը կանխաւ դիմած էին „Արևելեան Դաշնակցութեան" (Անաթոլիքի Օմոսփոնտիա, — Confèdèration Orientale.) որոյ կեդրոնն է Աթէնք և որոյ անդամներ են Յունաստանի խիստ կարևոր և ազդեցիկ անձնաւորութիւններ, խնդրելով իրենց համակրութեան տակ առնուլ հայկական հանդէսը։ Դաշնակցութիւնը, որոյ նպատակն է արդէն արևելքի բոլոր ժողովրդոց բռնապետական լուծէ ազատման գործին աջակցել, սիրով կընդունի հայոց առաջարկն և իր նախագահ 95 ամեայ ծերունի Տ. Ն. Պօցարիսը (Bozaris) յուղեալ շեշտերով կըսէ թէ „ամէնքս եղբայր ենք և պարտաւոր գերութեան մէջ հեծող մեր եղբայրներուն համար աշխատիլ, ուստի ինչ որ ձեռքէս կուգայ սիրով ընեմ իմ յօժարութիւն ձեր ջանից"։ Արդարև „Դաշնակցութիւնը" իր վրայ առնելով հանդէսին համակրութիւնը՝ իր կողմէ 500 է աւելի հրաւիրագիր ցրուեց քաղաքիս ամէն աստիճանի անձանց և հանդէսին կարգադրութեանց մէջ հայկական Մասնախմբին մեծապէս աջակցեցաւ։ Այս պարագայն էր որ շփոթութեան մէջ ձգեց յոյն կառավարութիւնը. արդէն հայերն առանձին մնալով իսկ՝ նա կը վարանէր արգիլել հանդէսը, քանի որ երկրին օրինաց բացորոշապէս հակառակ պիտի լինէր, բայց այժմ նա կը տեսնէր իր դէմ ոչ թէ օտարացի հայեր, այլ մի հզօր և ժողովրդականութիւն վայելող մարմին՝ որոյ ձեռամբ կազմակերպուած մի հանդէս արգիլելն անկարելի էր և կրնար յառաջացնել ներքին դժուարութիւններ... Միւս կողմէ տաճիկ դեսպանը տեսնելով իր անյաջողութիւնը՝ կը դիմէ անգլիական և աւստրիական դեսպանաց միջնորդութեան, որոնք ի շնորհս օսմ. դեսպանին և կամ իրենց շահերէն դրդեալ դիմում մ՝ ալ իրենք կընեն հելլէն կառավարութեան մօտ՝ արգիլելու համար հայկական թափորը։ Իզուր կառավարութիւնը դիմումներ կընէ „Դաշնակցութեան" և նախարարապետ. Տէլիեաննիսը անձամբ կը դիմէ նախագահ Պօցարիսին վերցնել իր համակրութիւնը հանդէսին վրայէն. 95 ամեայ ծերունին կը մնայ անդրդուելի։ Յոյն կառավարութիւնը այսպէս չկարենալով արգիլել հանդէսը՝ գէթ անոր անպատշաճ դիրք մը կը բռնէ և կառավարական շրջանակաց կողմէ որ և է մասնակցութիւն կարգիլուի։ Այսպէս, Դաշնակցութիւնը կուզէր հանդէսը կատարել Զափփիոն կոչուած հոյակապ շէնքին դահլիճին մէջ, բայց

չէնքը կառավարական ըլլալով չտրուիր։ Քաղաքական պաշտօնատունէն դրօշակներ կուզուի չտրուիր և այլն . . ։ Ասկէ ի զատ քաղաքին փողոցներէն դրօշակներով և նուագարանով հանդիսաւոր անցք կազմելն կողմնակի կերպով կարգիլուի։ Հանդէսին ծրագրին համեմատ՝ Օմ'նիա հրապարակէն թափորով պիտի երթցուէր հանդիսավայրը Սթաա մեծ փողոցէն և Սինտագմա հրապարակէն անցնելով և մի և նոյն ճանապարհով պիտի լինէր նաև վերադարձը։ Ծրագրին այս կէտը միայն ճշդիւ չի գործադրուեցաւ եղած արգելքին պատճառաւ, թէև այս չի կըրցաւ զգալի կերպով խանգարել հանդիսին շուքն ու փառաւորութիւնը։

Ն կ ա ր ա գ ր ո ւ թ ի ւ ն հ ա ն դ ի ս ի ն.

Տասնևհինգ Յուլիսի արիւնահեղ ցոյցին տարեդարձը կատարուեցաւ Օփոլլօն հովասուն պարտէզին մէջ երկուշաբթի՝ 15 յուլիսի, երեկոյին ժամը 5 ին։ Հակառակ տեղւոյն հեռաւորութեան՝ հինգ հարիւրէ աւելի բազմութիւն հետզհետէ խռնուեցաւ և բռնեց նստարանները, յորս կը նշմարուէին նաև տիկնայք։ Հանդիսականաց մէջէն 150 ի չափ թիւ մը կը կազմէին հայերը, իսկ մնացելոց մէջ տեղացի յոյներէ վերջ մեծամասնութիւն կը կազմէին վիճակակից կրետացի եղբայրները իրենց հին և նոր զըլխաւոր ապստամբապետներով, որք են Պարթէնիոս և Պեբիգիս և գափիթան Լիապի։ Կրետացիներէ զատ՝ կը գըտնուէին Մակեդոնացիներ, Ալպանիացիներ, Եպիւռացիներ և փոքր Ասիոյ այլ և այլ քաղաքներէ յոյներ։ Խմբագրական մարմինը իր ամբողջութեամբ ներկայ էր, ինչպէս նաև եւրոպական այլ և այլ լրագրաց թղթակիցներ *)։ Ոստիկանապետը և բազում ոստիկաններ իրենց ներկայութեամբ պատուած էին հանդէսը և անկէ զատ հանդիսավայրին շուրջը ոստիկաններ կը վխտային, կարծես թէ հանդէսը կազմուած ըլլար Թուրք դեսպանատան վրայ յարձակում գործելու նպատակով կամ մի ուրիշ խռովայոյզ նպատակաւ . . . . ։

Բեմին ճակատը զարդարուած էր գոյնզգոյն դրօշակներով, որոց վրայ պարզուած էին հայոց եռագոյն դրօշը և հելլենականը, սոցա մէջտեղ կարմիր ֆօնի վրայ յեղափոխական կարմիր դրօշակներու մէջտեղ դրուած էին Ցոյցին հերոսներուն Յարութիւն Ջանկիւլեանի, Մանուկ Նալպանտեանի և Գումրուեան Յովհաննէսի պատկերները, որոց շուրջը կը բոլորէր դափնի պսակ։

Մեծ ազդեցութիւն կուտար նուագածուաց խումբ մը որ կը նուագէր գեղեցիկ կտորներ, յունական քայլերգը և հայկական ազգային երգեր։ Մասնախմբին անդամք ազգային և կարմիր գոյներով ժապաւէնէ նշաններ կը կրէին իրենց կուրծքին վրայ։

*) Եւրոպական լրագիրներում այդ հանդիսի մասին 28 յուլիսից զետեղուած էին Աթէնքից հեռագիրներ հետեւեալ բովանդակութեամբ . —
„ Այստեղի հայ քաղաքական գաղթականները երեկ ժողովրդային մի ցոյց արին Գում․ Գափուի յեղափոխութեան տարեդարձի առթիւ։ Իրարանցումը մեծ էր. ոստիկանութիւնը միջամտեց ''։ Ծ․ Հ․ Խ․

Հայերէն և ֆրանսերէն լեզուներով յատկապէս նոյն օրուան համար տպագրուած և Ցոյցին նկարագրութիւնը և օրուան հերոսներուն կենսագրութիւնը պարունակող գրքոյկներ բաժնուեցան հանդիսականաց։ (**)

Հանդէսն հովանաւորող Արևելեան Դաշնակցութեան 95 ամեայ նախագահը ծերութեան պատճառաւ չկարենալով ներկայ գտնուիլ, Դաշնակցութեան կողմէ ներկայ գտնուեցաւ քարտուղար պ․ Լէոնիտաս Վուլկարիս որ և բացաւ հանդէսը յունարէն լեզուով բացատրելով անցեալ տարուան հայկական արիւնահեղ դէպքերը և անոնց մեծ նշանակութիւնը, և յայտնելով որ հանդիսիս նպատակն է այդ դէպքերուն մէջ անկելոց „ ք ա ղ ա ք ա կ ա ն յիշատակը'' տօնել։

Առաջին հայերէն ընթերցումն եղաւ Հ ն չ ա կ ի հանրածանօթ կարմիր Յայտարարութիւնը զոր կարդաց մասնախմբին անդամներէն Գ․․։ Թղթին արիւնագոյն կարմրութիւնը, կրակոտ ոգևորիչ գրուածքն և ընթերցման եռանդուն շեշտերը մեծ տպաւորութիւն թողուցին հանդիսականաց վրայ՝ որք բանիցս ծափահարեցին։

Անկէ վերջ խօսք առաւ Կրետացի նշանաւոր ուսուցիչ պ․ Վասիլէոս Փսիլաքիս որ խիստ համակրելի և եռանդագին խօսեցաւ յունարէն, և գլխաւորապէս խօսքն ուղղելով „ հայոց տառապանաց բազդակից կրետացի եղբարց'' անոնց յիշեցուց թէ առաջին անգամը չէ որ Հայք և Կրետացիք կ' եղբայրակցին իրենց հասարակաց թշնամւոյն դէմ. „ Հայերը, ըսաւ ի միջի այլոց, որ մինչև անցեալ տարուան յուզումները հողագնդիս վրայ իբրև առանձին գոյութիւն ունեցող ազգ չէին երևիր, մեծ պատմութիւն ունին։ Երբ Հայոց Տիգրան Թագաւորը և Պոնտոսի Միհրդատը կը պատերազմէին Հռովմէական տիրապետութեան դէմ, մի և նոյն ժամանակ Կրետացիք ևս նոյն թշնամւոյ դէմ մարտ կը մղէին. այսպէս իրարու դաշնակցեցան և դարերէ վերջ այսօր մի և նոյն հարկին և եղբայրական պարտաւորութեան տակ կը գտնուին։ ''

Ասոր ետևէն Մասնախմբի անդամներէն Տ․ կարդաց Ֆրանսերէն ճառախօսութիւն մը որ կը պարունակէր Ցոյցին համառօտ պատմութիւնը և անոր նշանակութիւնը, օրուան հերոսներուն համառօտ կենսագրութիւնը, յիշատակելով յիսունի չափ յունաց ինքնաբերական մասնակցութիւնը հայոց ժողովրդային շարժման և անոնցմէ երկուքին հինգ և տասնևհինգ տարուան բերդարգելութեան դատապարտուիլը և բացականչեց „ կեցցէ' ճնշեալներու միութիւնը հասարակաց ճնշողին դէմ։ Անկցի' հասարակաց թշնամին ''։

Այս ատենաբանութենէն վերջ Մասնախմբի մի ուրիշ անդամը, Յ․ կարդաց հայերէն լեզուով ճառախօսութիւն մը որ գլխաւորապէս Հայաստանի մէջ տեղի ունեցող քաղաքական և տնտեսական հարստահարութիւնքը կը նկարագրէր, ցոյց տալով այս ամենի արիւնոտ դարմանը։

(**) Հայերէն գրքոյկը Հ ն չ ա կ ի 10 համարի Յաւելուածն է, իսկ ֆրանսերէն գրքոյկը ստանալ ցանկացողները կարող են դիմել խմբագրութեան։ Ծ․ Հ․ Խ․

Այս ազատաշունչ պարագային մէջ անկարելի էր որ լուռ կենար 1866 ի կրետական ապստամբութեան պարագլուխ յարգելի Պարթենիոս Պերիգիս սպիտակամօրուս երեցը, որոյ ներկայութիւնն ու թունդ ազատական բանախօսութիւնը ցոյց կուտար մի նահանգուն սիրտ, լի մարդասիրական վեհ զգացումներով և ձգտումներով։ Պատկառելի երեցը պերճաբան և հրաշունչ զգացմամբ լի ճառով մը խօսեցաւ սարկական լուծին տակ հեծող Հայ և Հելլէն եղբարց վրայ և հանդիսին բարձր նպատակին վրայ, ըսելով այսպէս. „Ձայն զուժեաց Արարատէն և հասաւ մինչև Պերիկլէսի հայրենիքը, ձայն բողոքոյ ընդդէմ բարբարոս և անգութ բռնապետութեան" և յետոյ ի մէջ բերելով Բեթլեհեմի մանկանց կոտորածը ակնարկող "Ձայն զուժեաց ի Հռամա, ողբումն, լալումն և աշխարումն" աւետարանական խօսքը, գեղեցիկ կերպով զայն պատշաճեցուց Էրզրումի կոտորածին և ի վերջոյ բարեմաղթեց Հայոց արժանանալ տեսնելու ազատութեան լոյսը (Ջերմ ծափահարութիւնք)։

Ասոր յաջորդեց Մասնախմբի անդամներէն Ն. ի Փըրանսերէն բանախօսութիւնը՝ սա իր խօսքն ուղղելով Թուրքիոյ լուծին տակ ճնշեալ զանազան ժողովրդոց՝ որոյ ներկայացուցիչք կային, այն միտքը յայտնեց թէ նոքա պէտք չէ յուսադրին եւրոպական շահամոլ կառավարութեանց կարծեցեալ մարդասիրական զգացմանց. անհերքելի փաստերով ցոյց տուաւ թէ նոցա ամեն գործոյ զսպանակն է իրենց սեփական շահուն հաշիւը և հետևեցուց թէ ճնշուած ազգութիւնները իրենց յոյսը միմիայն յեղափոխութեան վրայ դնելու են և իրենց ճշմարիտ եղբայր և բնական դաշնակից փնտռելու են նոյն լուծին տակ ճնշեալ միւս ժողովուրդներու մէջ։ Ատենաբանը հեգնական կերպով յիշեց և այն պարագայն թէ Թուրք կառավարութիւնը ջանացած էր արգիլել այս օրուան հանդէսը. շողոքորթներէ և հացկատակներէ շրջապատեալ սուլթանը թերևս կարծելով թէ տակաւին Յունաստան Թուրքիոյ վիլայէթ մ՚ է, և այս առթիւ յիշեցուց և այն ծիծաղելի պարագայն որ անցեալ տարիներ ալ նոյն յիմար կառավարութիւնը կը ջանար Անգլիա հրատարակեալ Հայ թերթերը խափանել... Ի վերջոյ, ի դիմաց իր հայրենակցած խումբին շնորհակալութիւն յայտնեց նախ քաղ. փախստականաց հիւրընկալ Յունաստանին և Հելլէն եղբայր ժողովրդին, երկրորդ անունի Արևելեան Դաշնակցութեան՝ հանդէսը իր հովանաւորութեան տակ առնելուն համար և ի մասնաւորի Դաշնակցութեան նախագահ զօրավար Կօթի Պօցարիսին։ Այն ճառախօսութիւն վերջացաւ հետևեալ բացականչութիւններով "կեցցէ՛ յեղափոխութիւն. Անկցի՛ բռնութիւն."։ Նոյն բացականչութիւնքը սրտանց կրկնեցին ներկայք, մանաւանդ Հայք և կրետացիք։

Ի վերջոյ Մասնախմբի անդամներէն Բ. կարդաց մի հայերէն բանաստեղծական գրուածք խիստ սրտաշարժ պարունակութեամբ և յուզիչ շեշտերով, խօսքն ուղղելով ներկայ ղ ա ր ի պ հայ եղբայրներուն, Հայաստանի որբ թշուառ վիճակը Թուրք բռնապետութեան օրհասական ճիգերը նկարագրեց, ազգին մէջ գիտակցութեան աստիճանաբար զարթման վրայ ճառելով խօսքը բերաւ Կարնոյ և Կ. Պօլսոյ նշանաւոր դէպքերուն վրայ, Ցոյցի հերոսներուն վրայ և յեղափոխական յորդորներ կարդաց։ (Ջերմ ծափահարութիւնք։)

Վերջին անգամ կրկին խօսք առաւ „Արևելեան Դաշնակցութեան" ներկայացուցիչն պ. Վուլկարիս որ հանդէսը փակեց և յայտնեց թէ Թափօրով պիտի երթցուի որպէս նաև Դաշնակցութեան նախագահ զօրավար Պօցարիսին շնորհակալութիւն յայտնելու։

Թ ա փ օ ր ը.

Այս կերպով հանդէսը վերջանալով Թափօրը կազմուեցաւ, առջևէն նուագարանը, ետևէն հայկական և հելլենական դրօշները և անոնց ետևէն ժողովուրդը (յեղափոխութեան կարմիր դրօշակ պարզելն արգիլեալ)։ Հանդիսականաց մեծագոյն մասը հետևեցաւ Թափօրին, որուն սակայն աւելի բազմութիւն պիտի հետևէր անշուշտ եթէ Թափօրին անցած վայրերը արտակեդրոն չըլլնէին։ Հելլէն կառավարութիւնը արգիլած ըլլալով կեդրոնական փողոցներէն և հրապարակներէն անցնիլ, որպէս ուղեգիծն էր, և այդ փողոցներու անկիւնները հեծեալ ոստիկաններ դրած ըլլալով՝ հայք պարտաւորեցան Ակրօպօլիսի առջևէն զարնել Օմիրեօս փողոցը և այնպէս շարունակել։ Գնացքը եղաւ խիստ կանոնաւոր և ոգևորեալ, առանց ո և է միջադէպի. նուագարանը բացի յունական քայլերգէն և ազգային երգէն, նուագեցին նաև հայկական երկու երգեր "Մեր հայրենիք թշուառ անտէր..." և „Ազնիւ ընկեր մեռանում եմ, բայց հանգիստ եմ ես հոգւով..." զորս և Հայերը բերանացի կ՚երգէին։ Մէկ ժամու գնացքէ վերջ Թափօրը հասաւ ծերունի Պօցարիսի բնակարանին առջև։ Ալեզարդ ծերունին պատշգամը ելաւ և յայտնապէս յուզեալ կերևէր։ Հոն ևս նուագարանը քանի մը կտորներ նուագեց, կրկին երգուեցան ազգային երգեր՝ որոց նուագարանը կը ձայնակցէր, կարդացուեցաւ առ Պօցարիս ուղղեալ շնորհակալեաց ուղերձ մը յունարէն լեզուով, զի այն անձնաւորութեան անունը և հաստատակամութիւնն էր որ պսակեց հայկական ցոյցին յաջողութիւնը, խորտակելով ամեն արգելք։ Պատշգամէն պ. Վուլկարիս՝ ի դիմաց ծերունի զօրավարին շնորհակալութիւն յայտնեց հայոց այս երախտագիտական ցոյցին և մաղթեց ազատութիւն և անկախութիւն հայ ազգին և հայրենեաց։ Մասնախմբին անդամք վեր ելնելով անձամբ յայտնեցին իրենց շնորհակալիքը. զօրավարը այնքան յուզուած էր որ արտասուք կը կաթէին աչքերէն։ Երկարատև կեցցէներու մեծազօրդ ձայներէ վերջ բազմութիւնը ցրուեցաւ հետը տանելով նոյն հանդիսին փառաւոր յիշատակը որ միանգամայն ցոյց մը և յաղթութիւն մը էր ընդդէմ Թուրք կառավարութեան և եղբայրութեան դաշինք երկու ճնշուած ազգաց մէջ։

Կէս ժամ վերջ Մասնախմբին կողմանէ կրկին պատգամաւորութիւն մը ներկայանալով Պօցարիս զօրավարին նուիրեց մի ծաղկահիւս գեղեցիկ պսակ, զոր նոյնպէս մեծ յուզմամբ ընդունեց զօրավարն և ի փոխարէն՝ Հըն

չակեան Յեղափոխական Կուսակցութեան նուիրեց իր կենդանագիրը։

Այն անձը՝ որ հակառակ երեք դեսպաններու գիտութեանց և հակառակ նոյն իսկ Հելլէն կառավարութեան աննպաստ տրամադրութեան, իր անդրդուելի համառութեամբ հանդիսին և ցոյցին յաջողութիւնը և պսակաւորեց, արդարև արժանի է, մեր անկեղծ երախտագիտութեանը։ Կենդանի մնացորդ Հելլենական անկախութիւնը անգին զոհողութեամբ գնող հերոսներու, նա եղբայրն է այն հռչակաւոր Մարկոս Բոցարիսին՝ որուն երախտապարտ է ամբողջ Ելլադան. մեծ պաշտօններ վարած է յունական բանակին մէջ որուն և սպարապետ կարգուած է։ 95 ամեայ հասակին մէջ տակաւին չիջած չեն իր սրտին մէջէն ազատութեան սուրբ բոցերը և տակաւին կաշխատի ու կաջակցի ճնշեալ ազգերու ազատութեան սուրբ գործին։

Հսկում Թրքական դեսպանատան մէջ.

Յուլիս Տասնեհինգի տարեդարձի հանդէսէն վերջ՝ հսկում եղած է օսմ. դեսպանատան մէջ, վախնալով որ հայերը դեսպանատան վրայ գիշերային յարձակում մը ընեն....

Թուրք կառավարութեան հանդէսն արգիլելու համար բրած բոլոր ճիգերն ուրիշ արդիւնք չունեցան, բայց միայն աւելի մեծցնել հանդէսին նշանակութիւնը քաղաքական աշխարհի առջև։ Այդ յաջողութիւնը ցոյց տուաւ Թուրք բռնապետութեան որ, եթէ իրեն պաշտպան կառավարութիւններ դեռ կը գտնուին, սակայն չեն պակսիր և հայոց պաշտպաններ ժողովուրդներու մէջ, և այդ ժողովուրդներուն կամքը յաղթեց այդ կառավարութիւններուն կամքին և ապտակեց մանաւանդ Թուրք բռնակալ կառավարութիւնը եղբայրացեալ ազգերու զօրաւոր ապտակով։ Այժմ Թուրք դեսպանը կառավարութենէն փրփրած և աչքերը դարձած՝ տակաւին կերազէ մեծ լուծել, կարծես Վոսփորի բանատանց ափանց վրայ գտնուէր, պահանջելու հայ քաղաքական փախստականներու Յունաստանի ազատ հողէն արտաքսումը և դեռ չեմ գիտեր ինչ, կուշ ծեծող պատճառելով հայ յեղափոխականաց։

Հելլեն լրագրութիւն.

Հելլեն լրագրութեան հայկական հանդիսին առթիւ բռնած ընթացքը, որպէս միշտ, բիւր շնորհակալեաց արժանի է։ Յունաստանի երեք կուսակցութեանց պատկանող առհասարակ բոլոր թերթերը թէ հանդէսէն յառաջ և թէ վերջը մեծ համակրանօք խօսեցան և հանդիսին նկարագրութեան երկար յօդուածներ նուիրեցին։ Մասնաւոր յիշատակութեան արժանի են երեք մեծ թերթերը Էթնիքի՛, Աքրօ՛փօլիս և Էֆիմէրիս, որպէս նաև Քէրի որք բացի հանդիսի նկարագրութիւնէն „Հայ եղբայր ազգութեան" վրայ խմբագրական յօդուածներ ևս գրեցին։ Ասանց խտրութեան կուսակցութեան, ամեն թերթերը միաձայն բողոքեցին հելլեն կառավարութեան ընթացքին դէմ, խստիւ քննադատելով զ. Տէլիեանիսի այս խնդրոյ մէջ բռնած թոյլ քաղաքականութիւնը որով դեսպանաց աչքին մտնալու համար յունական սահմանադրութեան դէմ դիզծանէր։ Երկար կը լինէր քաղուածքներ ընել յոյն թերթերէն։

Աթէնք, 1891 յուլիս 16. Ապտակ.

ՏԱՐԵԴԱՐՁ ՅՈՒԼԻՍ ՏԱՍՆԵՒՀԻՆԳԻ.

Մեզ հաղորդում են, որ Յուլիս Տասնեւհինգի տարեդարձի օրը մասնաւոր հանդէսներ են կատարուել նաև Ռումանիայի եւ Բուլղարիայի զանազան քաղաքներում։ Հանդէսները անցել են շատ եղբայրական ոգով։

ՎԱՐՁԿԱՆ ԼՐԱԲԵՐՆԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ.

(Տեղեկագրված Կ. Պօլսից.)

Իտալացի Ակոթինօ Տանուսսօ անուն անձը որ ասկէ մի քանի տարի յառաջ Կրետէ երթալով ինպաստ Թուրք կառավարութեան հեռագիրներ և թղթակցութիւններ կը գրէր եւրոպական լրագրաց և որ ժամանակէ մը ի վեր Կարին և Հայաստանի այլ և այլ քաղաքներ պտըտելով միևնոյն անամօթ պաշտօնը ի գործ կը դնէր — ինչպէս որ ժամանակին Հնչակի մէջ ծանուցուած է (երրորդ տարի, Nr 12, երես հինգ։) — այս անգամ Տրապիզոնի ճամբով Պօլիս վերադարձած և ի վարձատրութիւն իր մատուցած ծառայութեանց սուլթանէն երրորդ կարգի մէճիտիէ պատուանշան ստացած է, բացի 30 ոսկոյ ամսաթոշակէն զոր կընդունի կառավարութեան գանձէն։ Հաւանական է որ սա այլ և այլ տեղեր ճամբորդութիւններ կատարէ գաղտնիքներ խլելու և կամ ի մօտոյ Հայաստան վերադառնայ։ Զգուշանալ այդ վարձեալ անձնաւորութենէն։

— , —

Կուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացուել են հետևեալ գումարները. —

Եգիպտոսի Ալ. քաղաքից R. P. — ից 124 Ֆրանկ, — Թ. — ից 30 Ֆր.. Ռումանիայի Քէօս. ք. — ից Մասնաճիւղից 73 Ֆր. 21 սանտիմ, — Գ. ալ. ք — ից Եգիպտոսի ձեռքով մշակների մէջ հանգանակուած 36 Ֆր., — Ֆօքշ. ք. — ից Յարութիւն Ճիւճիւից հինգ Ֆր.. — Ռուսաստանի Պ. ք. — ից Մ. ից 20 Ֆր, — Մ. ք. ուսանողից 20 Ֆր. — Ա. — ք. ից Բ. ից 10 Ֆր. — Ն. ք — ից մի խումբ Ջոկերից 30 րբլ., Թ. ք — ից մի խումբ օրիորդներից 20 րբլ. — Բ. ք. ից մի խումբ մշակներից 30 Ֆր.։

* * *

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետևեալ հասցէով.

Paris (France). M. Beniard. Poste restante.

Լոնդոն. Հայկական ազատ տպարան.

պատմական հանգամանքները բերել բարդել են հայ ներկայ սերնդի վրայ, միանգամայն փոքրոգութիւն է։ Դա նաև յանցանք է հայ ապագայ սերնդների առջև։ Եւ այդ տեսակէտից, արդարև, կարող է դժբաղդ լինել ներկայ սերունդը, եթէ չը կատարէ և կամ չը կարողանայ կատարել, եթէ իր ոյժից վեր լինի իր դերը։ Բայց նա պէտք է իրեն բարեբաղդ համարէ, որ այդպիսի մեծ կոչումն ունի, ինչ պատմութիւնը ամեն սերնդին չէ պարգևում։ Նա պէտք է իրեն բարեբաղդ համարէ, որ ստրկութեան փոշին հայութեան վրայից թօթափելու և հայ ապագայ սերունդների կեանքի պայմանները թեթևացնելու ու նրանց զարգացմանը միջոց տալու դերն ունի։ Եւ մենք կարող կը լինենք կատարել այդ դերը, եթէ յեղափոխական մարմինները ճշմարիտ պահապան լինեն հայոց կեանքի՝ յանուն լուսաւոր նպատակների և ճշմարիտ առաջադէմ ձգտումների ամբողջ մարդկութեան, որի մի մասնիկն է հայութիւնը։ Մենք կարող կը լինենք կատարել այդ դերը, եթէ յեղափոխական մարմինները մի և նոյն ժամանակ միշտ արթուն պահեն հայ ժողովրդային ընդհանրութեանը։ Արթուն մարդը դիւրութեամբ չէ կողոպտվում, չէ ծեծվում, չէ սպանվում. նա կիմանայ միշտ ընդդիմադրել բռնութեան, ճնշման, հարուածին։

Այո՛, մեր կեանքն անցում է այսօր շատ անհարթ ճանապարհով, բայց մենք չը պիտի վհատվենք, որովհետև կարող ենք անցնել այդ ճանապարհը։ Հէնց մեր առաջին օրից սկսա՛ծ ապրել լացի ու ցաւի մէջ, նեղված մինչև ճնշման աստիճանը, վիրաւորված մեր ամեն սրտա քայլափոխում, անսովոր համարձակութեան, — մեր յուսահատութեան, մեր վհատութեան տըրտունջը պատերազմի տագնապից է, որ դիտէ կարծես մարտիկներին ծաղրել մերթ ողջութեան ժպիտով, մերթ ձախորդութեան արցունքով։ Տոկունութիւնը, եռանդը, յարատևութիւնը մեզ պակասում են։ Անհաջողութիւնը մեզ վհատեցնում է, արգելքները մեզ անհամարձակ են դարձնում, հարուածները մեզ ընկճում են, սխալները մեզ շփոթեցնում են և զգուշութիւնը հասցնելով մինչև երկչոտութեան աստիճանը, մենք մտածում ենք յետ կենալ ամեն գործից, խուսափել ամեն պարտականութիւնից և ասում ենք, թէ մենք վհատված ենք։ Բայց այդ ամենն այդպէս չի լինիլ և մենք էլ չենք հասնիլ վհատութեան աստիճանին, եթէ անձնատուր լինենք մի լուսաւոր որոշ սկզբունքին, հանուր բարօրութեան վսեմ գաղափարին և զոհելով դրան ամեն բան, թէ՛ ձախորդութեան, թէ՛ ողջութեան ժամանակ միշտ այդ ըմկըլունքը, այդ գաղափարն ունենանք մեր աչքի առջև տակուն, որոնց կերպով միշտ հետևենք նրան, մտքով, հոգով, բոլոր ջերմով նուիրված լինենք նրան, անուշադիր թողնելով այն ամենը, ինչ կարող է նսեմացնել մեր աչքին մեր այդ փայլուն ապագը և վհատութեան թոյնը տարածել մեր մէջ։ Այդ ժամանակ մեր կենսական ծովի փոթորկում մենք միշտ կունենանք մեր ղեկավարիչ փարոսը, մեր խարիսխը և մեր մէջ մի ներքին մարգարէական ձայն շարունակ կը խօսէ ապագայ երջանիկ կեանքի մասին և միշտ կը ներշնչէ հաւատ դէպի հայութեան, դէպի մարդկութեան բաղդը։

Կուսակցական բաժանումների և միութեան հարցի մասին կը գրենք մեր երկրորդ նամակով։

ՆԱՄԱԿՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ.

—

Կ. Պօլիս, 21 յունիս 1891.

Հետզհետէ կը հաստատուի որ կառավարութիւնը պատրիարքարանի գրագիրները կաշառելով, ստացած է անոնցմէ հայկական խնդրոյ վերաբերեալ բոլոր թղթերը, Մաթէոս եպիսկոպոս Իզմիրլեանի ձերբակալուած ու հարցաքննուած պահուն։

Պատրիարքը անցեալ շաբաթ օրը Ադլիէն (դատական նախարարութեան) երթալով ուրբաթ աւուր Ազգ. ժողովի նոր համարատուութիւնը ըրած է։

Արաբական խնդրոյ մասին այստեղ դեռ շատ քիչ կը խօսուի, սակայն հետզհետէ կը տարածուի այդ լուրը ժողովրդեան մէջ և սարսափ կազդէ պաշտօնական մարմնոյ ու մոլեռանդ թրքաց մէջ։ Կը պատմուի թէ շատ բաներ կը լինին անդ։ Ունճեան և Նշանեան ընկերութեան „Ատանա" շոգենաւով ռազմամթերք է փոխադրուեր Ճիտտէ. նոյն շոգենաւը Իզմիրէն և Կրետէէն զօրք ալ առեր է։

Պուրսայի առաջնորդ Բարթուղիմէոս հայ շրջանակներու մէջ ամեն անգամ որ առիթը ներկայանայ խօսիլ իւր պատրիարքութեան հաւանականութեանը վրայ, բացէ ի բաց կը յայտարարէ թէ ինքը ամենևին ցանկութիւն չունի (մի՛ գուցէ միայն կառավարութիւնը կը ցանկայ . . .) պատրիարքական աթոռը նստելու, եթէ ազգը մի օր հրաւիրէ բազմիլ նորա վրայ (. . .)։ Թէ՛ արդէն մի անգամ ընտրուած է, ազգին մեծամասնութեան քուէովը (յիշեցէք Նար-պէյի և իւր մրցակցութեան դէպքը), և թէ՛ ինքը 25 տարի առաջնորդական պաշտօնով ազգին և տէրութեան ամենայն հաւատարմութեամբ ծառայելէ յետոյ՝ իւր ծերութեան օրերուն մէջ բաւ որ ժամուն կատանայ իւր վարձատրութիւնը, տէրութեան կողմանէ (2500 դրշ.) ամսաթոշակ։ Սակայն յիշեալ սրբազանի հեզահամբոյր խօսքերն գուցէ շատ մը միամիտներ խաբէին, եթէ իւր բռնած ընթացքը գոնէ առերևոյթս համապատասխանէին իւր խօսքերուն։ Նա չի դադարիր ստէպ-ստէպ յաճախելէ բարձրաստիճան նախարարաց դահլիճները՝ ուր կը յուսադրուի, կը խրախուսուի իւր պատրիարքական ընտրելի։

Գիտակ.

— . —

Կ. Պոլիս, 8 յուլիս 1891.

Անցեալ հինգշաբթի ամսոյս յուլիսի 4 ին Թէրսանէի կողմը խումբ մը զինուորներ կը յարձակին մի հրէայ պատանի փերեզակի վրայ և մահուան սպառնալեաց տակ կառնեն անկէ երեսուն դահեկան (բոլոր ունեցած) գումարը և կը պահանջեն որ, որ ևէ մէկու մը չիմացնէ եղելութիւնը, ապա թէ ոչ կսպանուի։ Թշուառ պատանին ահ ու սարսափի մէջ կը խոստանայ անոնց՝ որ ևէ մէկուն դիմում չընէր, սակայն զինուորները կը վարանին և վախնալով որ տղան անպատճառ կը յայտնէ, դաշտնի երկու հարուածներով (մին թիկանցք և միւսը կուրծքի կողմէն) կսպանեն։ Այդ սճիրը գործադրելէ անմիջապէս յետոյ կը յարձակին մի ուրիշ հրէայի վրայ, որ պատահած դէպքէն անտեղեակ՝ կանցնէր մօտէն և նոյն եղանակաւ կը կորզեն անկէ 5 6 հարիւր դահեկան. այդ միջոցին վրայ կը հասնի մի երրորդ հրէայ (արիւնաջի), որուն զինուորները մի և նոյն սպառնալիքը ըրած և դիմադրութեան հանդիպած են, կուզէ օգնել իւր ազգակցին, սակայն կատաղած զինուորները ընդդիմացող երկու հրէայներն ալ ծանրապէս վիրաւորելէ վերջ խոյս կուտան։ Այս դէպք ղաղտնի պահուած է, որովհետև դա ուղղակի կառավարութեան պատուոյն ու վարկին կը դպչի։ Զինուորներուն կողմանէ այսպիսի մի յախուռն ընթացք, այդ ալ սուլթանի քթին տակ, ուրիշ բան չը ցուցներ, բայց եթէ թրքական բարբարոսութիւն և զինուորական անօթութիւն։

Կըսուի թէ կառավարութիւնը վերջին պատրիարքարանի դուռը փակցուած յայտարարութեան և Վարդանի յուզարկաւորութեան հանդէսին պատկ դնելու ամբաստանութեամբ ձերբակալուող բանտարկեալներէն զոմանս աքսոր, զոմանս իրենց հայրենիք պիտի ուղարկէ. միայն երկուքը վար պիտի դրուին։

Երդմամբ արձակեալ 86 բանտարկեալներէն ոսկերիչ Մաքսուտ անուն մին, իբր թէ ինքն ալ կառավարութեան առաջ կասկածելի, ասոր անոր հետ կը միանայ փախչելու պատրուակաւ, և փախչելու ժամանակ շղթաներուն մէջ ձերբակալել կուտայ կասկածելի փախստականները։

Նոր եկած ճամբորդներ և ստացուած նամակներ կը հաստատեն աւազակութեան հետևեալ դէպքը։

Մուսանի (Տիվրիկի) հայ գիւղացիք իրենց անասունները մարմանդները (եայլա) արածած պահուն, յանկարծակի չորս տաճիկ և երեք չէրքէզ սպառազինեալ վրայ կը հասնին, յառաջ ութը եղներ առնելով կը քշեն կը տանին մինչև Սարը-Զիշէր ըսուած տեղը։ Դաւիթ և Յովհաննէս, յարիւտակուած եղներուն տէրերը, յանկարծակի գալով՝ հաւարի (օգնութեան) կը վազեն և չուտով այս ու այն կողմէն քսանի չափ գիւղացիք կը հաւաքուին։ Նախ քան նոցա հաւաքուիլը՝ Դաւիթ և Յովհաննէս, առաջինը զինեալ սոսկ գիւղական մահիկով, իսկ երկրորդը ունենալով միայն բէվոլվէր, կը հասնին աւազակաց եւեէն։ Յովհաննէս կը ձայնէ „Մէհէմէտ աղա, Մէհէմէտ աղա, դուք ամեն օր մեր տունը հիւր կը լինէք, մենք միմեանց բարեկամ կը համարուինք, կը վայելէ՞ միթէ այս անգթութիւնը, դարձուցէք եղները"։ Աւազակները նախատական խօսքերով կը պատասխանեն։ Այն ժամանակ Յովհաննէս զայրացած՝ կարձակէ բէվոլվէրը։ Աւազակաց մէջ շփոթութիւն կիյնայ, և „պու կեսիսուր լար պիզի էօլմիւրմէյէ զատա էտիյօրլար – մեզի սպան ներու գիտաւորութիւն ունին" ըսելով հրացաններն կուզեն դէպի Դաւիթն ու Յովհաննէսը, որք անմիջապէս կը քաշուին մի քարի ետև։ Այդ միջոցին վրայ կը հասնին քսան հայերը՝ մեծ մասամբ հովուական ցուպերով։ Դաւիթ և Յովհաննէս կառաջարկեն նոցա երկու խումբ բաժնուիլ տասնեակներ և կտրելով աւազակաց ճանապարհը երեք կէտերէ ընդհանուր ոյժով յարձակիլ աւազակաց վրայ և աղատել եղները։ Սակայն նոքա մտածելով թէ զուցէ անկարող կը լինին ցուպերով դիմադրել հրացաններուն՝ չեն համակերպիր յարձակելու, իսկ երկու կարիճ հայերը չեն յուսահատիր և կորզեն կամ մեռնիլ և կամ աղատել իրենց տաւարը։ „Ի՞նչ, միթէ կը վայելէ մեզ յայտնի համարձակ թողուլ որ քշեն տանին մեր անասունները, առանց որոյ մենք ոչինչ ենք" կաղաղակէ Յովհաննէսը կատաղած՝ "ո՛չ, ամօթ կը լինի մեզ այդ վատութիւնը ընել, աւելի լաւ է կարիճի պէս մեռնել՝ քան թէ երկչոտ ապրիլ"։ Այս խօսքերէն յետոյ նա կ'արձակէ միմեանց ետևէ իւր բէվոլվէրը և կը վիրաւորէ մի քանի աւազակներ։ Վերջիններս ստացած վէրքերէն կատաղած Յովհաննէսին վրայ կը յարձակին և կսպաննեն զնոտակի հարուածներով։ Իսկ Դաւիթ իւր հովուական զաւազանով մի քանի յուսահատական հարուածներ իջեցնելէ յետոյ՝ ինքն ալ դաշտնի հարուածներուն տակ չարաչար վիրաւորուած գետին կը տապալի և անոյշ վիճակի մէջ գիւղ կը փոխադրուի։ Աւազակք կը տանին եղները։

Կը հաստատուի նոյնպէս թէ Կաւալու գաւառի Որանց գիւղի մէջ, որտ բնակիչք յայտնի են իրենց քաջութեամբ, երկու ամիս առաջ քսան խանչարի և մէկ հրացանի հարուածներու տակ կսպանուի Յարութիւն Պետրոսեան անձը 35 տարեկան հասակին մէջ։ Տասն և մէկ ամիս յառաջ նոյնքան սպանուիլը, տունը հրդեհելով կայրեն, կոչնչացնեն, մի և նոյն ժամանակ խոտերն ու հունձքերը։ Տասը տարի յառաջ սորա հայրը սպանած են, իսկ քսան տարի յառաջ պապը։ Այս տոհմական ոպանութեանց և վրէժխնդրութեանց հեղինակ քիւրդ Մուրատ աղայի եղբօր՝ իսկ մէյէք-էմօ Մուրատի քրոջ տղան ճանչցուած է։

Մայրաքաղաքիս հայ պանդուխտներուն վիճակն ալ քիչ խղճալի չէ։ Այս տեղ ևս ամեն օր անպակաս են ձերբակալութիւնք, որք շատ անգամ լրտեսներու կամայականութեանց ու չհասկնալութեանց արդիւնք են և ուրիշ ոչինչ։

Վերջին պահուս կիմանամք նաև որ Աբարկիրու տաճիկ ժողովուրդը, տեղւոյն մոլեռանդ խմամէն գրգռեալ՝ հայերը կոտորելու ցանկութիւն ունեցած է, սակայն տեղական կառավարութիւնը, ի հարկէ աչքի առաջ ունենալով անկէ յառաջ գալիք ծանր հետևանքները և ժողովրդային գրգռումը, կերպով մը արգիլեր է։

Կառավարութիւնը վերջերս կրթական նախարարութեան միջոցաւ յատուկ շրջաբերականներ ուղարկեց ուղղակի հայ դպրոցներու տեսչութեանց պատուիրելով որ պարգև արաչխութեանց առթիւ արտասուելիք՝ ամեն երգ,